ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1225-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« » ---------- 20 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1225-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, ինչպես նաև 34-րդ հոդվածի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հոկտեմբերի 23-ի՝ «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» N 1225-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին կետի 3-րդ ենթակետից հանել «դիմումների ու», «և նախաքննության»բառերը:

2. Որոշման N 3 հավելվածում՝

1) վերնագրից, 1-ին, 4-րդ, 13-րդ, 15-րդ, 16, 17-րդ և 19-րդ կետերից հանել «դիմումների և» բառերը.

2) վերնագրից, 1-ին, 3-րդ և 9-րդ կետերից հանել «և նախաքննության» բառերը.

3) 3-րդ և 9-րդ կետերից հանել «քննչական վարչության (բաժնի) պետի» բառերը.

4) 5-րդ կետից հանել «(նախաքննության)», «կամ նախաքննության» բառերը.

5) 7-րդ կետում «հանցագործությունների դեպքերի գրանցման-հաշվառման N 1 գրքի» բառերը փոխարինել «հանցագործությունների, վարչական

իրավախախտումների և պատահարների մասին հաղորդումների գրանցամատյանի» բառերով.

6) 16-րդ կետից հանել «և 4-րդ», «հանցագործությունների մասին դիմումներն ու հաղորդումները քննարկելու համար դրանք ըստ ենթակայության հանձնելու (4-րդ սյունակ)» բառերը և ՁԵ 2 Մ աղյուսակի 4-րդ սյունակը.

7) ՁԵ 2 Մ աղյուսակի վերնագրից հանել «դիմումների և», ինչպես նաև «և նախաքննության», իսկ աղյուսակից՝ «դիմումներով և» բառերը.

8) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ, 12.1-րդ, 12.2-րդ և 12.3-րդ կետեր.

«1.1. Հայաստանի Հանրապետության նախաքննության բոլոր մարմինները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 1-ը Հայաստանի Հանրապետության համապատասխան հետաքննության մարմիններ են ներկայացնում հանցագործությունների մասին դիմումների և հաղորդումների քննարկման վերաբերյալ կիսամյակային և տարեկան վիճակագրական տվյալները։».

«12.1. Հաշվետվության մեջ վիճակագրական տվյալները ներկայացնելիս քրեական գործով անցնող յուրաքանչյուր դրվագ դիտարկվում է որպես հանցագործության առանձին դեպք։

12.2. Մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտը գրանցված դեպքը ենթակա է ներառման այդ հաշվետու ժամանակահատվածի համար ներկայացվող հաշվետվությունում։

12.3. Հաշվետվության մեջ ներառվում են քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների վերաբերյալ՝ բացառապես հաշվետու ժամանակահատվածի կիսակյակային և տարեկան կտրվածքով արձանագրված տվյալները։»։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։